



**ԻԶԵՎԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՄ
ԿԵՆՏՐՈՆ**

ՀՀ Տավուշի մարզի Իջևանի Ուսանողական փ 3 հեռ. (077) 609000 e-mail info_idjevan@aarhus.am , david_ghazaryan.83@mail.ru

Ե N-003

*ՀՀ Բնապահպանության նախարար
Արամայիս Գրիգորյանին
Իջևանի Օրհուս կենտրոնի
համակարգող Դավիթ Ղազարյանից*

Հարգելի պարոն Գրիգորյան,


Խնդրում ենք <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների համաձայն՝ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

Նախնական տեղեկատվություն կա, ըստ որի <<Իջևան 1>> ՓՂԵԿ-ի երկրորդ հասարակական լուսմներն անցկացվելու են Երևանում: Արդյո՞ք այս տեղեկատվությունը հավաստի է: Եթե՝ այո, ապա խնդրում ենք <<Իջևան 1>> ՓՂԵԿ-ի երկրորդ հասարակական լուսմներն անցկացնել Իջևան քաղաքի տարածքում, քանի որ ՓՂԵԿ-ը գտնվում է Իջևան քաղաքի տարածքում և հասարակական լուսմների շահագրգիռո կողմերը գտնվում են Իջևանում և չեն կարող մասնակցել Երևանում կազմակերպվող հասարակական լուսմներին: Լուսմները կարող են անցկացվել քաղաքապետարանում կամ Օրհուս կենտրոնում:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ խնդրում եմ սույն հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության/ 30-օրյա ժամկետում):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

<<17>> հունիսի 2014

*Իջևան քաղաքի հասարակության անունից և խնդրանքով,
Հարգանքով՝ Դավիթ Ղազարյան /  /
Իջևանի օրհուս կենտրոնի համակարգող*